Արձանագրություն N 4

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

13 մայիսի 2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյանը, անդամներ՝ Ռուզաննա Իսահակյանը, Սամվել Ալավերդյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ի գրության քննարկման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովի քարտուղար Ս.Հարությունյանը ներկայացրեց 1-ին, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ից 12.05.2026թ. ստացված թիվ Կ/23500-2026 գրությունն առ այն, որ Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ը ներկայացնում է միայն 1-ին չափաբաժնի մասով պայմանագրի և որակավորման ապահովումները, իսկ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ լրացել է պայմանագիրը ստորագրելու և համապատասխան ապահովումները ներկայացնելու ժամկետը՝

Հանձնաժողովը որոշեց՝

- Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով ու հրավերի 8.15-րդ կետով՝ Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, վերջինիս վերաբերյալ նութերը համաձայն ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի և հրավերի 8.15-րդ կետի՝ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն (լիազորված մարմին)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան:
- Ընթացակարգը՝ 7-րդ և 8-րդ չափաբաժնի մասով, հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լևոն Հարությունյան

անդամներ _____ Ռուզաննա Իսահակյան

_____ Սամվել Ալավերդյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան